№ 29 Փետրվարի 23 (Մարտի 6) 1880 Փետրվարի 23 (Մարտի 6) № 29

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Նոտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Ռացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի խուլերին։—Ներքին տեսութիւն, Նամակ Շուշուց։ Նամակ Բագուից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Գերմանական լրագրութիւնը հայերի մասին։ Միսիոնարները Թիւրքիայում։ «Թէրճըմանի Լէքեարի» դատը։ Նամակ Գերմանիայից։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ԹԻՖԼԻՍԻ ԽՈՒԼԵՐԻՆ

Խուլ ասելով մենք հասկանում ենք այնպիսիներին, որոնց լսելիքը շատ նուրբ է օպերայի համար, բայց շատ բթացած աղերսալից հեծեծանքի, դիւրըմբռնող հեշտասէր սիրուհու հրամանը, բայց անմատչելի ծնկաչոք սոփամահի լացին, շատ սուր մոլութեան հրաւէրին, շատ ծանր մարդասիրութեան ձայնին, շատ սոլոր այն ոսկու ծրնկոցին, որը հարկաւոր է յափշտակել, բայց միանգամայն խորթ և անընտել այն աւորի խրըփոցին, որով ճեղքում է երկիրը բրտնաջան հայը մի կտոր հաց գտնելու և իր հայրենիքում առաքինութեամբ ապրելու համար։ Երբ այդ ծանր աշխատանքն էլ է հային ուրանում, զրկելով Նորան իր բոլոր ջանքերի արդիւնքից և հայը դիմում է իր ոսկեպատ աբիւնակցին, բայց զանցառութեան հանդիպում՝ մենք այդպիսիներին ենք խուլ կոչում։ Այդպիսիներից է բաղկանում գրեթէ ամբողջ Թիֆլիսը և այդպիսիների հետ է մեր երկու խօսքը։

Թէ ինչ ասել է Թիֆլիսցու համար ընկերի նեղութիւն, եղբօր աղաչանք, քրոջ արտասուք, ազգային կապ, արեան միութիւն՝ այդ յայտնի է ամենքին, վասն որոյ մենք չենք էլ ուզում այդ մասին խօսել։ Երբ խօսում ենք Թիֆլիսցու հետ, մենք միայն մի բանի վրա ենք դարձնում Նորա ուշադրութիւնը։ Թիֆլիսցի հայը այսպէս է նայում գործի վրա. եթէ ուրիշը տանջվում է նեղութիւնների մէջ՝ ինձ ի՞նչ օգուտ դորանից, եթէ ուրիշը լաց է լինում սովից՝ ինձ ի՞նչ օգուտ դորանից, եթէ նա ջուրն է ընկնում յուսահատութիւնից՝ ինձ ինչ օգուտ դորանից։ Թիֆլիսցին ամեն բանի վրա միայն անձնական շահի կէտից է նայում, վասն որոյ այդ կէտից միայն առաջ կը գանք մենք Թիֆլիսցու հետ խօսելու ժամանակ։

Մենք Նորան կասենք. եթէ դու սառնասրտութեամբ կը նայես, ինչպէս հարիւրաւոր մանուկներ ձիւնի մէջ թափվում են Նորա տակ արմատներ փնտռելով՝ դու կը զղջաս, եթէ դու կը ծիծաղես, երբ յուսահատների ձայնը երկինքն է տարածվում՝ դու կը վշտանաս, եթէ անտարբեր կը նայես ինչպէս երեք միլիոն ժողովուրդ ցիր ու ցան է լինում իր երկրից՝ դու չարաչար կը պատժվես—դու կը զրկվես քո սեփական օգտից. դու կը տեսնես որ Թիֆլիսի տապ երկինքը երբեմն սեացնող, սոված մարեխները իջան երկրի վրա և մարդու պատկերով, հէնց քեզ հասկանալի հայկական լեզուով սկսեցին քեզնից հաց խնդրել. եթէ կը մերժես՝ զօռով կառնեն, եթէ դուներդ կը փակես՝ կը փշրեն դուներդ, եթէ քո հացը կառաջարկես ուտելու՝ քեզ էլ հետը կուտեն։ Այդ ժամանակ միայն կիմանաս թէ ինչ ասել է անտարբեր նայել այն մարդկանց վիճակին, որոնց յոյսը քեզ վրա է այժմ, աչքը քո օգնութեան ճանապարհին....

Վասն որոյ Թիֆլիսցու իրան օգտի, անձնական շահի համար, մենք առաջարկում ենք Նորան վաղորդայն հոգալ տաճկահայոց սոսվելոց համար, նուիրելով իւրաքանչիւրը իր ունեցածի հէնց մի հիւլէն, մի ատոմը։ Խուլերի մէջ մենք դիմում ենք նախ այնպիսիներին, որոնք լինելով բնիկ Թիֆլիսցի, ունենալով իրանց քաղաքացիների հետ սերտ յարաբերութիւն, հաշիւ և առևտուր, հետևում են այն անձների օրինակին, որոնք թէպէտ Թիֆլիսի մէջ են ապրում և գործում, բայց իրանց շրջապատող հասարակութեան հետ ոչինչ յարաբերութիւն և մասնաւոր գործ չունեն։

Գր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

14 փետրվարի

Անցեալները դրսից վերադառնում եմ Շուշի. դեռ մի քանի վերստ քաղաքից հեռու ընկերացայ մի երիտասարդի։ Միմեանց բարևելուց յետոյ, նորութիւններ ենք հարցնում, որոնք իմ բացակայութեան ժամանակ պատահած կը լինէին։ Հարցերիս պատասխան ստանալուց յետոյ, զանազան առարկաների վրա զրուցելով ճանապարհներս շարունակում ենք։ Հետաքրքրութիւնից շարժված, ճանապարհորդակցիս հարցրի պսակված է, թէ ոչ։ Սկզբում ասաց, որ չէ պսակված, բայց փոքր լռութիւնից յետոյ խոստովանեց, որ պսակված է։

Ահա թէ բարեկամիս տխուր խոստովանութիւնից ինչ կարողացայ հասկանալ։ Նորա պատմութիւնից երևաց, որ դեռ 10—12 տարեկան հասակում, իր վարպետի հետ ուրիշ քաղաքում գտնված ժամանակ, իր հայրը Նշանել է Նորա համար մի փոքր աղջիկ։ Անցնում են տարիներ և տղան վերադառնում է տուն. հօր կամքը իբրև սուրբ պատուէր ընդունելով, լռում է, սակայն ամօթ համարելով, երբէք յարաբերութիւն չէ ունենում աղջկայ տան հետ։ Այսպիսով անցնում են մի քանի տարիներ և բարեկենդանի օրերը մօտեցած լինելով, աղջկայ հայրը յանկարծ առաջարկում է, որ կամ պսակեն տղային, կամ թոշնեն ուրիշի վրա պսակելու։ Տղայի հայրը իրան ստորութիւն համարելով, որ իր տղայի նշանած աղջկան ուրիշ տղայ առնէ, հարսանիքի պատրաստութիւն է տեսնում, չը նայելով որ տղան այդ անակնկալ առաջարկութիւնից վաղուց արդէն վատ էր տրամադրված դէպի իր հարսնացուն, մանաւանդ որ քոյրը երազումը տեսել էր, որ իրենց հարսնացուն, իբր թէ կամենում է գնալ իրենց (փեսայի) տունը, բայց ճանապարհից յետ է դառնում, ասելով թէ չուն կծեց, էլ չեմ կարող գալ....Ինչ և իցէ հարսանիքը կատարվում է. ուրախութիւնները յանկարծ փոխարկվում են տրտմութեան, երբ կարծեցեալ աղջիկը փեսային խոստովանում է, որ ինքը սիրելիս է եղել իրենց հարևանի տղային և, չը նայելով որ պսակված է, Նորան սիրելուց դադարել չէ կարող։ Փեսան բարկացած այս անցքի վրա, կանչում է պսակող քահանային, աղջկայ հօրը և մի քանի անձանց, որոնց մօտ հարսը նոյն խօսքերը կրկնում է։

Փեսան այդ յիշեալներին կանչում է, որ, իր ինքնասիրութիւնը չը գրգռելու համար, ասելորդ մի բան տան, կամ գոնէ խնդրեն և աղջկան խրատեն, որ լռի։ Բայց հակառակն է պատահում։ Հայրը աղջկան տանում է տուն, հարևանի տղայի հետ հաշիները վերջացնելու պատրուակաւ, բայց միւս օրը տղային կանչում են կօնսիստորիա, թէ ինչու կնոջդ տէրութիւն չես անում։ Տղան պատասխանում է, որ ինքը կին չէ ուզել և այդպիսով չնում են մի զուռնա, որ չորս տարի շարունակ փչվում է։ Տղան պսակի հրաման է խնդրում, կօնսիստորիան վաղն է գցում։

Բարեկամիս խոստովանութիւնը հրապարակ հանելով, մնայոյս եմ, որ ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսը, այսպիսի հանգամանքները ի նկատի առնելով, կը բարեհաճի անմեղ զոհերին այդ բարոյական գերութիւնից ազատել, հիմնվելով երկնաւոր վարդապետի այն վճռի վրա, որ կանանց արձակելու մասին իրանից հարցնող փարիսեցիներին ասաց։

Նորին Օծութեան ամենախնամ որդիական խնդիրս մատուցանելուց յետոյ, կամենում եմ մի խորհուրդ տալ հայ ծնողներին և կնքել նամակը։ Դուք, հայ ծնողներ, աւելի խղճմտանքով վարված կը լինէիք եթէ երկրորդ. երրորդ և այլ կին առնէիք, քան թէ ձեր որդիների ազատ սէրը և զգացմունքը ճնշելով այս կամ այն—միայն ձեր հաւանած—աղջկերանց հարս ունենալու համար, բռնանաք Նրանց իրաւունքի վրա, ուրեմն և բանի ամուսնացնէք, որից ոչ թէ միայն այսպիսի, այլ և աւելի տխուր հանգամանքներ են առաջ գալիս։ Համեմատութիւնը չէ թոյլատրում ինձ այստեղ յիշել այն գիւղերի անունները և մատնացոյց անել այն ծնողներին, որոնք հակառակելով իրենց որդոց ազատ ընտրութեանը, չանվել են միայն վերջինների անձնասպանութեամբ։ Ձեր ասած ժամանակները վաղուց են անցել, ամեն մարդ իր անկախ իրաւունքը պիտի ունենայ։

Ա.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

11-ին փետրվարի

Անցեալ ամսվայ 31-ին կայացաւ «Մարդասիրական ընկերութեան» ընդհանուր խորհուրդը։ Նախագահի հիւանդութեան պատճառով ժողովին նախագահում էր պ. Անտօնեանը։ Հաշիւը ներկայացվելուց յետոյ մի քանի անդամներ առաջարկեցին խորհրդին քանի մի նշանաւոր և անշան հարցեր։ Պ. Ստեփանեանցը (ուսումնարանի տեսուչ) առաջարկեց խորհրդին բանալ ընկերութեան ուսումնարանի համար երկրորդ դասատուն։ Խորհուրդը ընդունելով այդ հարցը, վճռեց որ այս տարվայ սեպտեմբերի մէկից բացվի այդ դասատունը ընկերութեան հաշիվով։ Պ. նախագահ Բաղիրեանը թղթով առաջարկեց խորհրդին մի հարց, որը, մեր կարծիքով, ամենահարկաւորն էր, այն է ընկերութեան պատկանող չինութեան վերին յարկում կառուցանել մի մեծ դահլիճ և սենեակներ, որոնք կարող լինեն ծառայել թէ հայերէն ներկայացումներին և թէ մասնաւոր անձանց վարձով տալու համար։ Պ. Բաղիրեանը առաջարկել էր նաև, որ եթէ ընկերութիւնը չը համաձայնվի ընդունել իր վրա չինութեան ծախսերը, այն ժամանակ առաջարկել մի քանի ունեւոր անձանց ընդունել իրանց վրա այդ ծախսերը, բայց միայն այն պայմանով, որ այդ անձինքը չինութեան արդիւնքով օգտվեն 15 կամ 20 տարի. և ինքը պ. Բաղիրեանը յանձն է առնում մասնակցել այդ բանում։ Խորհուրդը ընդունելով այդ հարցը, իր կողմից նշանակեց մի յանձնաժողով, որ պէտք է քննի թէ այդ հարցը և թէ ընկերութեան հաշիւները և նախընթաց տարվայ գործունէութիւնը։ Խորէն քահանայ Միրզաբեկեանը առաջարկեց խորհրդին մի արձան կանգնացնել «Մ. ընկերութեան» հիմնադիր անդամ հանգուցեալ Ռոստոմեանցի յիշատակին։ Այդ ևս ընդունելով, խորհուրդը յանձնեց յիշեալ յանձնաժողովին իմանալ թէ ինչ արժողութիւն կունենայ այդ յիշատակարանը։ Յետոյ այս ու այն կողմից առաջարկվեցան զանազան տեսակ անտեղի հարցեր, որոնցից մէկը գուցէ հետաքրքիր հեռու Ռուսաստանում ընկերութեան ուսանող—որդեգիրներին։ Անդամներից մէկը առաջարկեց խորհրդին, որ ընկերութեան այժմեան որդեգիրներին մերժել, և սրա փոխարէնը բանալ քանի մի հայաբնակ գիւղերում ուսումնարաններ, որովհետև այդ հարցը առաջարկողների կարծիքով, ընկերութեան որդեգիրները գնում են Ռուսաստան ոչ թէ միայն ուսանելու, այլ շռայլութիւն և անբարոյականութիւն սովորելու։ Բայց խորհուրդը այնքան բարի գտնվեցաւ, որ այդպիսի առաջարկութիւնը մերժեց և վճռեց, որ այսուհետև ուրիշ որդեգիրներ չընդունել, կամ թէ ընդունել այն պայմանով, որ ուսումն ստանալուց յետոյ որդեգիրը պարտաւորված լինի ընկերութեան ծառայել 5 կամ 6 տարի։

Ամսոյս 6-ին «Մարդասիրական ընկերութեան» դահլիճում հայ թատրոնասէրները տուին երրորդ ներկայացումն, յօգուտ հայ թատրոնական բեմի և դեկորացիայի։ Այս անգամ ներկայացրին «Թուղթ խաղացողի կնիքը»։ Առաջին երկու ներկայացումն ևս յաջող անցան, որովհետև թատրոնասէրները ընտրել էին իրանց այժմն համեմատ պիեսաներ, իսկ ինչ վերաբերվում է երրորդ ներկայացման, այդ մասին ևս անյարմար եմ գտնում խօսել, որ մի գուցէ վիրաւորում թատրոնասէրների սիրտը։ Սակայն պէտք է ասած որ «Թուղթ խաղացողը

ինքը չունի այնքան թատրոնական յարմարութիւններ, ինչպէս կարծում են առհասարակ։ Այդ պիեսայի մէջ համարեա թէ բոլորը պատահական է և ինքը պիեսան առաւել բռմանիզմ է քան թէ դրամատիզմ։ Բայց և այնպէս մենք խորհուրդ կը տայինք մեր թատրոնասէրներին, որ նրանք միւս անգամ չը սխալվեն ընտրել այդպիսի դժուար պիեսաներ։

Լսում ենք որ թատրոնասէրները միտք ունեն բարեկենդաններին ներկայացնել «Շուշանիկ» ողբերգութիւնը։ Մենք մեր կողմից խորհուրդ չէինք տայ մեր թատրոնասէրներին ներկայացնել պատմական փտած պիեսներ, այլ՝ առաջ ունենալով Սունդուկեանցի «Պեպո»ն և «Խաթաբալայ»-ի նման գեղեցիկ գրուածները, որոնք ներկայ կեանքից լինելով, կարող են առաւել լաւ ազդեցութիւն ունենալ, թէ նոյն իսկ խաղացողների և թէ հասարակութեան կեանքի վրա։ Ցոյս ունենք, որ թատրոնասէրները չեն զադարի չարունակաբար ներկայացումներ տալուց և իրանց անձնական թշնամութիւնները չեն խառնի այդպիսի ազգօգուտ գործերի մէջ, ինչպէս երեում է այժմ այդ անում են։ Իսկ ինչ վերաբերում է հասարակութեան, այդ կողմից վէտք է խոստովանած, որ նա սառն չէ նայում թատրոնական գործին, այլ յաճախում է և յուսով ենք, որ առաւել համակրելով այդ գործին, կօգնէ ինքն ևս իր կողմից թէ նիւթապէս և թէ բարոյապէս, որպէս զի կարելի լինի մի մշտական խումբ կազմել, որը, մեր կարծիքով անհրաժեշտ է ունենալ Բաքուի նման հարուստ և հայաշատ քաղաքին։

Վերջացնելով ներկայ նամակը, մենք պարտք ենք համարում յայտնել մեր անկեղծ յնորհակալիքը աղնիւ տ. տ. Արզումանեանին և Թումանեանին, որոնք չը նայելով մեր հասարակութեան մէջ արմատացած նախապաշարմունքներին, դուրս են գալիս բեմ, այդպիսով օրինակ դառնալով միւսներին։ Յետագայ նամակիս հետ կուղարկեմ երեք ներկայացումից գոյացած գումարի և ծախսերի հաշիւը։ առ այժմ միայն կարող եմ ասել, որ մենք ունենք մի զարդարուն դահլիճ և թատրոնական բեմ իր բոլոր պատրաստութիւններով։

Աղէքսանդր Մովսէսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԳԱՆՁԱԿԻՑ պ. Մարտիրոս Նաբաթեանց ուղարկեց մեզ 240 րուբլ հետեւեալ նամակով։ «Ահա նամակովս ուղարկում եմ մի քանի անձանց նուիրատուութիւններ, ընդամենը 240 րուբլ, խնդրելով խոնարհաբար շուտով հասցնել այդ փոդերը Վան քաղաքի սովմահ մեր եղբայրակիցներին և տպագրել «Մշակի» մէջ նուիրատուների անունները։ Պետրոս Նաբաթեանց 100 ր., Յովհաննէս Հալաբեանց 25 ր., Ներսէս Տէր-Ներսէսեանց 30 ր., Աղա Աղայեանց 15 ր., Աէքսանդր Խաչակեանց 50 ր., Ղահրաման Յովհաննէսեանց 10 ր., Եագոր Յովհաննիսեանց 5 ր., Մամիկոն Եախչանց 5 ր., Ընդամենը 240 ր.։»

—

Ստացանք ՁԻԿԻՇԼԵԱՐԻՑ 102 բուբլ յօգուտ «Աբարատեան» ընկերութեան հետեւեալ անձինքներից։ Սարգիս Լալայեանց 20 ր., Արշակ Տէր-Սարգիսեանց 3 ր., Աստուածատուր Մելիքեանց 1 ր., Անդրէաս Ղուկասեանց 3 ր., Յովհաննէս Բաղիրով 5 ր., Յովհաննէս Պետրոսեանց 2 ր., Մ. Պապաեան 1 ր., Նիկոլայ Մէլիքով 5 ր., Յակոբ Ճաբարով 2 ր., Յակոբ Դօնդարեանց 2 ր., Մինաս Առաստակէսեանց 1 ր., Աւետիս Մէլիքեան 1 ր., Յովսէփ Սարգիսեանց 1 ր., Գաբրիէլ Սարգիսեանց 1 ր., Գէորգ Յակոբեան 1 ր., Անյայտ 2 ր. 50 կ., Մէլքում Տէր-Յարութիւնեանց 1 ր., Աւետիս Տէր-Օհանեանց 20 ր., Անյայտ ոմն հայ 2 ր. 35 կ., Աղգասէր 3 ր., Անյայտ ոմն 1 ր., Մէսնիկով 1 ր., Անյայտ 1 ր., Ներսէս Տէր-Յովհաննէսեանց 2 ր., Անյայտ 1 ր. 25 կ., Սէրգէյ Քոչարով 2 ր., Վահան Մէսրոպեան 5 ր., Թուրքէն մոլա Դուրդի 5 ր., Մի Թուրք 5 ր. 65 կ., Անյայտ 25 կօպ.։ Գումարն է 102 բուբլ։

—

Ստացանք 38 բուբլ յօգուտ Թիւրքիայի հայ սովատանջների ԹԻՖԼԻՍՈՒՄ բնակվող հետեւեալ անձինքներից։ Օտարական ոմն Մ. Ր. 3 ր., M. Арасхановъ 3 ր., Ստեփան Վարդապետեան 3 ր., Մինաս Եարդուլեանց 3 ր., Ս. Մ. 3 ր., Ց. Աղաբէկեանց 2 ր., Յովհաննէս Թումանց 2 ր., Յակոբ Տուգուլեանց 2 ր., Գրիգոր Աւետեանց 2 ր., Леонтій Костюкъ 2 ր., Սէրգէյ Յարութիւնով 1 ր., Gäschke 1 ր., Մկրտիչ Վ. Դուկասեանց 1 ր., Հազարապետ Սուլխանեանց 1 ր., Հազարապետ 1 ր., Խ. Շահնազարեանց 1 ր., Դաւիթ Դաւթեանց 1 ր., Յովհաննէս Ազամալեանց 1 ր., Հայ ոմն 1 ր., Իվան Եղիազարեանց 1 ր., Emile Perrin 50 կ., Ефимъ 50 к., Михаилъ Кириловъ 50 к., Григорій Доминовъ 50 к., Григорій Ефремовъ 50 к., Վասիլ Յարութիւնեան 50 կ.։ Ընդամենը 38 բուբլ։

—

Լրագիրները հաղորդում են որ Մոսկվայի Պետրովսկի ակադէմիայում փետրվարի 8-ին հրդեհ յայտնվեցաւ։ Կրակը չը կարողացան հանգցնել և ինչպէս մեր թղթակիցը մեզ գրում է կրակին զոհ գնաց ակադէմիայի մուզէումը, որտեղ գտնվում էին գիւղատնտեսական, բուսաբանական և մեքենայական կաբինէտները։ Բուսաբանական կաբինէտը իր հարուստ ժողովածուի (կոլէկցիայի) կողմից առաջինն էր համարվում ամբողջ Եւրոպայում։ Որովհետև Պետրովսկի ակադէմիայում կան մօտ 30 կովկասեցիներ, աւելացնում է մեր թղթակիցը, որոնցից մօտ 10 հայեր են զանազան քաղաքներից, ուստի թղթակիցը խնդրում է յայտնել «Մշակի» միջոցով ի միամտութիւն ուսանողների ծնողների, որ հրդեհի ժամանակ ոչ մի ուսանող չէ վնասվել։

—

Լսում ենք որ Դրիգոր Աղծրունու «Թիւրքաց հայերի տնտեսական դրութիւն» վերնագրով բրոշիւրը, որ նորերումս հրատարակվեցաւ գերմաներէն լեզուով, շուտով տպագրվելու է Մոսկվայում ռուսերէն լեզուով։

—

Ստացանք ՔՈՒԹԱՅԻՍԻ մէջ բնակվող պ. Սարգիս Յովհաննէսեանցից 10 բուբլ յօգուտ Վանի սովատանջների։

—

Վաղը, կիրակի փետրվարի 24-ին պ. Կոզլով (յայտնի ձեռնածուն, ֆոկուսնիկ), տալու է մի ներկայացումն Արծրունու թատրոնում։ Սկիզբը 7½ ժամին։ Թատրոնը յարմարեցրած է այդ ներկայացմանը։

—

Էչրակի, փետրվարի 24-ին Գոդֆրուա եղբայրների ԹԻՖԼԻՍԻ ֆրանսիական ցիրկում լինելու են երկու մեծ ներկայացումներ. մէկը առաւօտը, երեխաների համար կը սկսվի ուղիղ 12 ժամին, իսկ միւսը երեկոյեան, կը սկսվի 8 ժամին։ Երկու ներկայացումներն էլ շատ բազմակողմանի են լինելու։

—

Երէքշաբթի, փետրվարի 19-ին թագաւոր կայսրի քանոնիզնգ ամայթագաւորութեան յօբելեանին ԹԻՖԼԻՍԻ Հալաբար բաժնի Էջմիածնեցոց եկեղեցու միաբանութիւնը կայսեր կեանքի համար մաղթանք է կատարել։ Եկեղեցում ներկայ են եղել Հալաբարի Մարիամեան ուսումնարանի վարչութեան անդամները, աշակերտուհիները և նրանց ծնողները։ Մաղթանքից յետոյ ուսումնարանի դահլիճում վարչութեան ներկայացուցիչ պ. Կ. Թ. բացատրել է մանուկներին այդ օրվայ նշանակութիւնը և պատմել է կայսրի մեծագործութիւնները, որից յետոյ աշակերտուհիները երեք անգամ երգել են «Տէր պահեա կայսրին» ռուսաց հիմնը հայերէն լեզուով։ Գիշերը ուսումնարանը լուսաւորված է եղել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՑԵՐԻ ՄԱՍԻՆ

—

«Köln. Zeitg.» գերմանական լրագրին գրում են Կ. Պոլսից հետեւեալը, որ արտատպում է «Post» լրագիրն էլ։

Վերջին լուրերը Կ. Պոլսից մի տխուր պատկեր են նկարագրում հայերի դրութեան վրա Փոքր-Ասիայում։ Վանի, Բայազէթի և Էրզրումի վիճակներում սովը ճշմարիտ սարսափելի ընդարձակութիւն է ստացել։ Ամենաաղքատ բնակիչները կերակրվում են բոյսերի արմատներով և տերևներով և կամ յօրի աւելորից պատրաստած հացով, որ չէ կարող քաղցը յագեցնել և հիւանդում ու թոյլ կազմուածքների վրա ազդում է որպէս սպանիչ թոյն։ Անսովոր խիստ ձմեռը այնպէս էլ վատ ճանապարհները անանցելի դարձրեց։ Յորնի բերելը Ռուսաստանից և Պարսկաստանից ճանապարհների դժուարութեան և տեղափոխութեան ահագին ծախսերի պատճառով անհնարին դարձաւ և չը նայելով այս բոլորին, Թիւրքաց վարչութիւնը անտես առնելով այդ թշուառութիւնը, սաստկութեամբ հարկեր է պահանջում հարստահարված ժողովրդից, հասցնելով նրան վերջին ծայր յուսահատութեան։ Հայերի թշուառ դրութիւնը նրանով էլ աւելի անմխիթար է դառնում, որ զէնքից զուրկ ազգաբնակութիւնը մշտական երկիւղի մէջ է ապրում քուրդերի յարձակումների առջև։

Բերլինի կօնգրէսը, շարունակում է գերմանական լրագիրը, դաշնագրութեան 61-որդ յօդուածի զօրութեամբ, մարդասիրական ըզգացմունքներից դրդված, պարտաւորեցրեց Բ. Դրանը անյապաղ մտցնել հայերով բնակված երկիրներում այն վերանորոգութիւնները, որոնք պէտք է բարեբէին հայերի դրութիւնը, պաշտպանելով նրանց կեանքը և կայքը։ Բ. Դուռը խոստացաւ կատարել այդ վերանորոգութիւնները և պարտաւորվեցաւ պարբերական կերպով տեղեկացնել մեծ պետութիւններին այն միջոցների մասին, որոնց գործ դնելու է իր յանձն առած պարտաւորութիւնները կատարելու և պետութիւնները յատկապէս պահպանեցին իրանց ձեռքում գործ դրվելու վերանորոգութիւնների վրա վերահսկելու իրաւունքը։ Բայց, ասում է «Köln. Zeitg.»-ի լրագրի թղթակիցը, մինչև այժմ ոչինչ չը կատարվեցաւ որպէս զի լրում տուի դաշնագրութեան զօրութեամբ հաստատված պարտաւորութիւններին։ Թիւրքաց տէրութիւնը աշխատում է առիթ բռնել իր ֆինանսական աննախանձելի դրութիւնը խոստացած վերանորոգութիւնները և բարեփոխումները յետաձգելու համար։ Եթէ մինչև այժմ մեծ պետութիւնների ներգործութիւնը այդ խնդրի մէջ միաձայն և եռանդոտ չէր, կարելի է յուսալ որ այսուհետև պետութիւնները այլևս չեն կարող յապաղել իրանց ձայնը բարձրացնելու և աւելի ու աւելի յայտնվող սովի ու թշուառ դրութեան առջև չեն կարող հրաժարվել դաշնագրութեան զօրութեամբ յանձն առած վերահսկողութեան իրաւունքից և պարտաւորութենից։ Բ. Դուռը շատ լաւ կանէր, ասում է գերմանական լրագիրը, եթէ իր շահը ի նկատի առնելով, պետութիւնների միացած և անպատճառ կատարվելու զորոգողութեանը չը սպասած, առաջն առնէր այդ զորոգողութեանը իրագործելով իր յանձն առած պարտաւորութիւնը։ Այսօր գեռ ժամանակ է, վերջացնում է «Köln. Zeitg.»-ի լրագիրը, եթէ ոչ ուշ կը լինի և շուտով կարող է «Հայոց խնդիրը» ուրիշ խնդիրների շարքում նոր դժուարութիւններ պատճառել Թիւրքաց պետութեանը։

ՄԻՍԻՕՆԱՐՆԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՑՈՒՄ

—

«Թայմզ» լրագրին յունվար 20 թիւ թերթին մէջ Այնթափի թղթակցէն առած մէկ նոր նամակը կը հրատարակէ, որ Թուրքիոյ մէջ Ամերիկայի Միսիոնարաց գործողութեանցն և բնիկ բողոքականաց վիճակին վրայ հետաքրքրական տեղեկութիւններ կուտայ, որք յիշեալ Միսիոնարաց կողմէն պաշտօնապէս հրատարակվելէ առաջ իրեն հաղորդուած են եղեր։ Անօգուտ չեմք համարիր այս վիճակագրական տեղեկութիւններն համառօտիւ մեր ընթերցողաց աչքին առջև դնել։ Ամերիկացի առաջին Միսիոնարը Կ. Պոլիս 1831-ին հասած լինելով, Թիւրքիոյ մէջ Միսիոնարաց գործն անընդհատ 49 տարուան միջոցի մը վրայ կը տարածի։ Մամուլը մեծ միջոց մ'ունեցած է իրենց ձեռք և Ս. Գիրքը Արաբերէնի, Հայերէնի, Թուրքերէնի, Պուլղարերէնի, Հրէական տառերով Սպաներէնի, Հայերէն և Յունարէն տարերով Թուրքերէնի, ինչպէս նաև մասամբ Քրդերէնի թարգմանած են, ըստ որում Թուրքիոյ Եւրոպական և Ասիական մասանց մէջ միայն մէկ լեզու չէր խօսւեր։ Ուսումնական հրատարակութիւններ ալ ըրած են։ 1878 տարւոյն մէջ Միսիոնարք Հայերէն լեզուով 19,175 օրինակ այլ և այլ գիրքեր և տետրակներ հրատարակած են՝ ունենալով ընդամենն 2,212,500 էջ կամ երես. իսկ Թուրքերէն լեզուով 23,000 հայատառ օրինակ գործեր տպած են՝ ունենալով 1,524,200 էջ. յունարէն գրով իսկ Թուրքերէն լեզուով 3,800 օրինակ գործ՝ 287,760 էջ. Պուլղարերէն լեզուով ալ 14,915 օրինակ գիրք և տետրակ, որք 2,462,620 էջ կը պարունակէին։ Միով բանիւ՝ Ամերիկացի Միսիոնարք 1878 տարւոյն մէջ 61,200 օրինակ այլ և այլ գործեր տպած են՝ ընդամենը 6,397,000 էջ։ Միսիոնարաց Թուրքիա գալէն ի վեր հրատարակած գիրքերն ու տետրակներն 2,248,354 օրինակ եղած են, և երկրին բնիկ լեզուներով հրատարակեալ էջերուն գումարն 325,503,988-ի եղած է։ 1878 տարւոյն մէջ Միսիոնարք իրենց տպած բոլոր գործերուն համար 3,500 Անգլ. ոսկի ծախք ըրած են։

Փոքր Ասիոյ մէջ, Սուրիոյ նահանգն ի բաց թողլով, արձանագրեալ բողոքականաց թիւն է 24,975։ Դաստիարակեալ բնիկ հովուաց և քարոզչաց թիւն է 116 և վարժապետաց գումարն 312։ Նոյնպէս Փոքր Ասիոյ մէջ բողոքականաց սովորական դպրոցներուն թիւն է 283, ուր 4,621 աշակերտ կը յաճախէ։ Մեծ ուշադրութիւն կը լինի կիրակնօրեայ վարժարանաց, ուր Ս. Գիրք միայն կաւանդուի, և որոնցմէ 176 հատ կայ՝ 15,523 յաճախորդով։

Խիստ քիչ հարուստ մարդիկ կան այս բողոքականաց մէջ, որոց ամենամեծ մասը ժողովրդեան աղքատիկ կամ միջին կարգերէն կը բաղկանայ. այսու ամենայնիւ, այս աշխատաէր մարդիկը թէև ծանր տուրքեր կը վճարեն կառավարութեան, և իրենց ընտանիք դժուարաւ կրնան հոգալ. իրենց եկեղեցեաց և դպրոցաց և անոնց պետոյին համար 1878 տարւոյն մէջ 4214 (չորս հազար երկու հարիւր տասն և չորս) անգղիական ոսկի տուած են։ Փոքր Ասիոյ բողոքական հասարակութիւնը մեծ խանդ կը ցուցնէ կրթուելու. աղջկանց դպրոցներու, բարձրագոյն վարժարաններու և աստուածաբանական դպրոցներու թիւն հետզհետէ կաւելնայ։ Այս կրթական հաստատութիւնք Միսիոնարաց անմիջական հսկողութեան ներքև են, որոց կ'օգնեն բնիկ դասատուներ և վարժապետներ։ Մարզուանի, Պրուսայի, Բաղիշոյ, Մարտինի, Քարբերդի և Այնթապի մէջ բողոքականք աղջկանց գիշերօթիկ դպրոցներ ունին, Աստուածաբանական վարժարաններ Մարզուանի, Մարաշի, Քարբերդի և Մարտինի մէջ, և երկու Քոլէժք, որք նոր հաստատեցան Այնթապի և Քարբերդի մէջ։ Կ. Պոլսոյ Ռոպերթ Քոլէժն և Պէյրութի Սուրիացի բողոքական նաց Քոլէժն այնքան հանրածանօթ են, որ մասնաւոր յիշատակութեան պէտք չունին։

Թայմզի թղթակիցը մեծ գովեստիւ կը խօսի միսիոնարաց գործին վրա՝ ժողովրդաւորի կրթութեան ընդարձակման և դաստիարակութեան ծաւալման տեսակէտով, և կրսէ որ թէև Միսիոնարք այս երկրին մէջ քաղաքական խնդրոց բնաւ չեն խառնուիր, այսու ամենայնիւ իրենց գործը քաղաքական կարևորութիւն ալ ունի, սա նկատմամբ թէ բնիկ ժողովուրդը կրթելով և յորդորելով իւր բնական իրաւունքները կը ճանչցնեն անոր և միանգամայն կը սովրեցնեն թէ ինքնօգնութիւնն և անդուլ աշխատութիւնը բարեկեցութեան և երջանկութեան միակ ճանապարհն են։ Բարեբաղդաբար, կըսէ՝ մեք ալ, ազգիս մէջ կրթութեան ու լուսաւորութեան գործն այժմ աւելի յաջող և յուսատու վիճակի մէջ է քան թէ քառորդ դար առաջ և